Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա...

ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS մայիս-հունիս, *2019*, № 2 (43) БАРЕГОРЦ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻ ՊՈՒՐԱԿԸ

Նկարում ձախից աջ՝ Քաշաթաղի վարչակազմի ղեկավար Ստեփան Սարգսյանը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, ԵՊՀ ուսխորհրդի նախագահ Դավիթ Ափոյանը

Մեծ եղեռնի միլիոնավոր զոհերի կսկիծը դեռ չմեղմացած՝ ահավոր ողբերգության, սովի, մեծաքանակ գաղթականների ու համաճարակային հիվանդությունների, տնտեսական-քաղաքական սուր ճգնաժամի պայմաններում Հայաստանի առաջին հանրապետության լուսավորության նախարար Նիկոլ Աղբալյանը 1919 թ. մայիսի 16-ին ստորագրեց կառավարության՝ Երևանի պետական համալսարանի հիմնադրման հրամանը: Ուրեմն՝ 2019-ը հայոց մայր բուհի 100-ամյակի տարին է և տոնական՝ մեր ամբողջ ժողովրդի համար: Մեր երկրի և սփյուռքի գիտության ու կրթության, ժողովրդական տնտեսության բոլոր ոլորտների համար տասնյակ հազարավոր որակյալ մասնագետներ պատրաստած, սկսած հայագիտությունից ու հայրենական մյուս հասարակական գիտություններից մինչև ամենաարդիական բնական ու տեխնիկական գիտությունները համաշխարհային ճանաչման արժանացրած այս հաստատության հիմնադրման հոբելյանական տոնական միջոցառումները վաղուց սկսվել և շարունակվելու են ամբողջ տարին: Իր փառապանծ տոնը համալսարանը դիմավորում է վիթխարի նվաճումներով ու նշանավորում իր մեծ վաստակին արժանի միջոցառումներով:

Ապրիլի 5-ին Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորի մատույցներում՝ արդեն առկա այգիների և պուրակների հարևանությամբ, ԵՊՀ տարբեր ֆակուլտետների ուսանողների և դասախոսների մասնակցությամբ հիմնվեց Երևանի պետական համալսարանի 100-ամյակի պուրակը: Հուշատախտակ–վահանակից հեռացնելով վարագուրող սավանը՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանն ասաց.

– Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի վարչակազմի մեծարգո՛ ներկայացուցիչներ և հյուրեր, սիրելի՛ ուսանողներ և գործընկերներ:

Մեծ խորհուրդ կա այն իրողության մեջ, որ 100-ամյակի հոբելյանական միջոցառումներն սկսում ենք Արցախում այս պուրակի հիմնադրումով և խորհրդանշական հարյուր ընկուզենիների ծառատունկով: Մեր համալսարանը միշտ էլ եղել է և է Արցախյան շարժման գաղափարական կենտրոններից մեկը և գործուն մասնակցություն է ունեցել պատերազմին՝ տալով խիզախ զորահրամանատարներ ու մարտիկներ, նաև ցավալի զոհեր, ովքեր իրենց պսակել են հավիտենական փառքով: Մեր համալսարանականները փայլել են նաև 1916 թ. ապրիլյան քառօրյայում:

Առաջին անգամ Արցախ եկածներ, նայե՛ք ձեր շուրջը և կտեսնեք մեր ուսանողների ձեռքով տնկված այս հազարավոր ծառերը, որ արդեն բերքատու են: Արցախում շատ պուրակներ ենք հիմնել՝ Երևանի պետական համալսարանի 90-ամյակի և 95-ամյակի անվան, Հայաստանի և Արցախի անկախ պետականության 25-ամյակի անվան, ի հիշատակ մեր զոհված զորահրամանատարների ու ազատամարտիկների՝ Հայաստանի Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի, մեր բանակաշինության հիմնադիրներից մեկի՝ Լեոնիդ Ազգալդյանի, Դուշման Վարդան Ստեփանյանի անվան՝ այստեղ՝ Բերձորում, դարձյալ համալսարանական, ՀՀ Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի անվան այգի՝ Կովսականում, Պետրոս Ղևոնդյանի անվան՝ Եղևնուտում, Նորայր Մարությանի անվան՝ Ներքին Հոռաթաղում:

Այս բոլորը տնկվել են հիմնականում մեր ուսանողների ձեռքով, ովքեր տարին երկու անգամ Արցախ են գալիս: Դուք էլ, սիրելի՛ ուսանողներ, ամեն մեկդ այսօր ծառ տնկելով՝ կզարդարեք մեր հայրենիքի այս չքնաղ անկյունը և կկապվեք նրա հետ: Արցախից կվերադառնաք բոլորովին այլ մարդ դարձած: Նոր հիմնադրվող այս այգին էլ բարիքներ է տալու այստեղ բնակվող մեր հայրենակիցներին ու անցորդներին:

Այս գեղեցիկ ավանդույթի սկիզբը դրել է մեր համալսարանի պրոֆեսոր, երկրի ու հողի անխոնջ նվիրյալ Գուրգեն Մելիքյանը, ով ուսանողների հետ ծառատունկ է իրականացնում դեռ 1960-ական թվականներից: Մենք բոլորս էլ հպարտ ենք, որ այստեղ ունենք մեր տնկած բարեբեր ծառերը, որ զարդարում են Արցախը Հայաստանին կապող մայրուղու եզրերը: Ծառ տնկելը մեծագույն բարիք է, երջանկություն, և այս այգին, որ այժմ միասին հիմնում ենք սերունդներին ի պահ, նվիրվում է մեր համալսարանի 100-ամյակին: Շնորհավորելով բոլորիս այս գեղեցիկ առիթով՝ մաղթում եմ տոնական տրամադրություն:

Իսկ հիմա ձայնը տալիս եմ մեր նահապետին՝ պրոֆ. Գուրգեն Մելիքյանին, որ իր քաջալերիչ խոսքով ու աղոթքով օրհնի այսօրվա սուրբ ծառատունկը:

- Ես նույնպես,- ասաց պրոֆեսորը,- շնորհավորում եմ բոլորիս մեր համալսարանի 100-ամյակի և այս ծառատունկի առթիվ: Մեծ պատիվ է հայրենի հողը այգիներով ու պուրակներով զարդարելը: Քոչվորը երբեք ծառ չի տնկում. ընդհակառակը՝ մեր տնկածն էլ ոչնչացնում է: Ոմանք Հայաստանում, ցավոք, վերջերս ապրում են քոչվորի պես՝ ծառահատելով անտառներն ու այգիները, իսկ մենք ծառ տնկելով ավելի ենք գեղեցկացնում ու հարստացնում մեր սիրուն հայրենիքը:

Լ. Զ. Սյուրմելյանի §Ասացվածք ծառ տնկելու մասին¦ աղոթք - բանաստեղծությունն արտասանելուց հետո Գ. Մելիքյանն ասաց.

— Ուրեմն՝ ի գո՛րծ, տնկում ենք ծառերն ու ջրում:

Ծառատունկին հաջորդեց Բերձորի հյուրատան բակում բացված ճոխ սեղանների շուրջ ուսանողական երգ ու պարով ուղեկցվող խնջույքը:

Նույն օրը երեկոյան մայրաքաղաք Ստեփանակերտում կայացավ համալսարանականների բովանդակալից համդիպումը ԱՀ նախագահ պրն Բակո Սահակյանի հետ:

Հետևյալ օրը Ազգային ժողովի նիստերի դահլիճում, ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանի նախագահությամբ տեղի ունեցավ Արցախյան կարգավորման շուրջ արդի քաղաքական զարգացումներին ու մարտահրավերներին նվիրված գիտաժողով, ուր հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան ԵՊՀ երիտասարդ դասախոսներն ու ուսանողները:

Տեսարան ծառատունկից

Առաջին անգամը չէ, որ ԱՄՆ Մեծ Խաղաղականի Արևմտյան ափի Կալիֆոռնիայի ՌԱԿ-ի մասնաճյուղի հրավերով ԵՊՀ դասախոսները մեկնում են Լոս Անջելես՝ տեղի հայ համայնքի առջև հանդես գալու հայ գրականության, գիտության ու մշակույթի բազմազան խնդիրների շուրջ հրապարակային բանախոսություններով:

Պրոֆ.պրոֆ. Գ. Մելիքյանի, Ա. Ավագյանի և Ս. Մուրադյանի՝ այս տարվա մարտ-ապրիլի ուղևորությունը դարձյալ նպատակային էր. նվիրված էր հայ ժողովրդի երկու մեծ զավակների՝ Հովհաննես Թումանյանի 150 և Վահան Թեքեյանի 140-ամյակների հանդիսությանը, որ տեղի ունեցավ Բըրբանքի Ս. Ղևոնդյանց եկեղեցու Գալայջյան սրահում մարտի 21-ին:

Բազմամարդ սրահում (շուրջ 350 հոգի) պրոֆ. Ս. Մուրադյանի գիտամանկավարժական վաստակը համառոտակի բնութագրեց Թ. Արզումանյանը, որից հետո պրոֆեսորը սեղմ բնութագրեց ամենայն հայոց բանաստեղծ Հովի. Թումանյանի ազգանվեր կյանքն ու հանճարեղ ստեղծագործությունը:

Պրոֆ. Ա. Ավագյանին ու նրա նոր լույս տեսած §Ազնվական քերթողը¦ գիրքը ներկայացրեց հանրաճանաչ գրագետ Օշին Քեշիշյանը: Ա. Ավագյանի §Վ. Թեքեյանի կյանքն ու գործը¦ բանախոսությունից հետո կայացավ գրքի շնորհանդեսը:

Վ. Թեքեյանի մասին բանախոսում է պրոֆ. Ա. Ավագյանը

Ամերիկյան ուղևորության բոլոր օրերն էլ հագեցած էին տարբեր ձեռնարկներով. հանդիպումներ՝ կարոտած հին ու նոր ծանոթների ու բարեկամների հետ, այցելություններ §Գլենդել քոլեջ¦ և այլ կրթօջախներ, որտեղ հայոց լեզվի և գրականության ուսուցիչները իրենց ուսանողության տարիները երանությամբ հիշող՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի երբեմնի ուսանողներ են: Քաղցր հիշողություններին միախառնվում էր բնական հարցուփորձը. տեղաբնակները՝ հայաստանյան արդի քաղաքական վիճակի, հեղափոխական իրադարձությունների, սոցիալ-տնտեսական, գրական ու մշակութային կյանքի, համալսարանի այսօրվա վիճակի, իրենց ապրող կամ վախճանված ուսուցիչների մասին, իսկ հյուր պրոֆեսորները՝ ամերիկահայերի ընդհանուր հոգսերի, նրանց աշխատանքի, ապրելակերպի, նոր սերնդի հետաքրքրությունների, հայրենիքի հանդեպ վերաբերմունքի, հայապահպանության դժվարությունների մասին:

Եղեռնի թաթը և աշխարհի չար ուժերն են բռնի տեղահանված հայությանը ցրել աշխարհով մեկ ու ձևավորել հայ սփյուռքը: Այսօրվա մարտահրավերների դեմ մաքառում է հայության նոր սերունդը՝ իր հայրենակցական միություններով, դպրոցներով ու մշակութային կառույցներով: Հետաքրքիր էին հանդիպումները պարսկահայերի, պոլսահայերի, դորթոյլցի հայ համայնքների ձեռնարկները, որոնց ընթացքում ստեղծվում էին նոր ծանոթություններ, ծագում էին երկուստեք բուռն հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկումներ: Սակայն առավել շահեկան էր մարտի 27-ին ՌԱԿ-ի ղեկավարության հետ հանդիպումը §Նոր օր¦ պարբերաթերթի խմբագրությունում:

Պոլսահայերի միությունում. ձախից՝ Օշին Քեշիշյան, Ա. Ավագյան, Ս. Մուրադյան, Բաֆֆի Պալյան

Ա. Ավագյանը, Գ. Մելիքյանը և Ս. Մուրադյանը ակամա մասնակիցը եղան աշխույժ բանավեճերի ու բուռն քննարկումների:

Դաղարի մի պահ

Ատենապետ Ր. Պալյանը բարձր գնահատեց հայրենի պրոֆեսորների ներկայությունը Լոս Անջելեսի հայրենակիցների միջավայրում, նրանց անկեղծ պատասխանները համարեց օգտակար և ուսանելի: Բոլորը միահամուռ հայտնեցին ոչ հեռավոր ապագայում նոր հանդիպման իրենց անկեղծ ցանկությունը: Ջերմ հանդիպման տպավորությունը երկար կմնա ներկաների հիշողության մեջ:

ՌԱԿ-ի ղեկավարության հետ ՝ հրաժեշտից առաջ

2019 թ. ՀՈՒՆՎԱՐ – ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ/հ	ամսաթիվ	Անուն, ազգանուն	Վճարման նպատակ	Գումար	Համարժեք
1	08.01.19	Շահնազարյան Հենրիկ	Բերձորի տաղանդաշատ երեխաների ամանորյա նվեր	150000	
2	08.01.19	Սարո Շահնազարի	ԽԵԱ ծրագիր	487000	1000 USD
3	11.01.19	Հրանտ և Հասմիկ Գալստյաններ	Օգնություն Խ. Աբովյանի տուն-թանգարանին	29800	
4	11.01.19	Հենրիկ և Անահիտ Շահնազարյաններ	Օգնություն Խ. Աբովյանի տուն-թանգարանին	49800	
5	24.01.19	Levon Kirejyan	cow project	338800	700 USD
6	29.01.19	Toni Kahve	student project	488500	1000 USD
7	05.02.19	Ա.ս.պ Դել-Մար ՍՊԸ	բարեգործություն	360000	
8	15.02.19	Levon Marashlian	cow project	340200	700 USD
9	05.03.19	Ա.ս.պ Դել-Մար ՍՊԸ	բարեգործություն	240000	
10	11.03.19	Նիկ Քանեան	Tree project in the memory of a powerful friend and supperter of Armenia /15.03.19/	20000	
11	11.03.19	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագիր՝ սիրելի ընկերոջս, տաղանդաշատ Գուրգեն /Գրիգոր/ Պետրոս-յանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի 12.02.2019	20000	
12	19.03.19	ԵՊՀ հիմնադրամ	Ֆին. աջակցություն բազմ. ընտ.	200000	
13	22.04.19	Անահիտ և Ալեք Տերյաններ	Դվին Տերյանի արևշատության համար	48350	100 USD
14	22.04.19	Ազնիվ և Զավեն Փինեճյաններ	Հակոբ Փինեճյանի հիշատակին	96700	200 USD
15	22.04.19	Ալեքսանյան Իրինա	Օգնություն ձեռագործ տիկնիկներ	193400	400 USD
16	22.04.19	Շմավոն Շմավոնյան	Օգնություն	483500	1000 USD
17	29.04.19	ԵՊՀ հիմնադրամ	Ֆին. աջակցություն	300000	
18	03.05.19	Հովակիմյան Գառնիկ	Գառնի ինվեստ աշխատակից Գառնիկ Հովակիմյանի հայր Աշոտ Հովակիմյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի 02.05.19	50000	
19	14.05.19	Հակոբյան Կարո	Հակոբյան Գրետայի արևշատության համար՝ ի փոխան ծաղկեպսակի	72370	150 USD
20	14.05.19	Հակոբյան Կարո	Հակոբյան Ֆրանկի արևշատության համար՝ ի փոխան ծաղկեպսակի	72370	150 USD
21	29.05.19	Մելիքյան Գուրգեն	Ալֆրեդ Մարդոյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի 19.04.19	20000	
22	29.05.19	Մելիքյան Գուրգեն	Raffle tickets and souvenirs	2869076	5975 USD
				7 913 866	

2019 թ. ՀՈՒՆՎԱՐ – ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՎՃԱՐՎԱԾ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐ

Հ/հ	Ամսաթիվ	ԲՈՒՀ	Նպատակ	Գումար
1	14.01.19	Արցախի պետական համալսարան	Ղուլյան Գոհար Արտակի, տնտեսագիտ. 3-րդ կուրս	100000
2	14.01.19	Արցախի պետական համալսարան	Խաչիկյան Նարինե Զավենի, բանասիր. 4-րդ կուրս	125000

3	15.01.19	Շուշիի տեխնոլոգիական համալսրան հիմնադրամ	Օրդուբեկյան Արմինե Սամվելի, ագրոբիզնես 1-ին կ.	125000
4	01.02.19	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. Կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ դեղագործ և քիմիա 4-րդ կուրս	30000
5	01.02.19	ԵՊՀ հիմնադրամ	Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ, Ճաղարյան Լուսինե, բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000
6	01.02.19	ԵՊՀ հիմնադրամ	Օգն. միակողմ. ծնողազուրկ Ադոնց Հովհաննես, դեղագործ և քիմիա 3-րդ կուրս	30000
7	15.02.19	ԵՊԲՀ	Օգնություն ազատամարտիկի որդի Գուրգեն Առուստամյանին	25000
8	15.02.19	ԵՊԲՀ	Օգնություն ազատամարտիկի որդի Ռոման Բաղդասարյանին	25000
9	15.02.19	ԵՊՀ հիմնադրամ	Յուխանով Արման, ռոմանագերմ.5-րդ կուրս հեռակա	60000
10	15.02.19	ԵՊԲՀ	Աղաջանյան Անի, պլաստիկ վիրաբուժ. Կլինիկ. Օրդինատուրա 4-րդ կուրս	100000
11	15.02.19	ԵՊՀ հիմնադրամ	Կիրակոսյան Յուրիկ, իրավագիտ. 3-րդ կուրս	100000
12	15.02.19	ԵՊՀ հիմնադրամ	Շեյխուկ Շանթ, ինֆորմ և կիրառ. մաթեմ. 3-րդ կուրս	135000
13	15.02.19	ԵՊՀ հիմնադրամ	Միքայելյան Արսեն Գրիգորի, մեխ. և մաթեմ. 1-ին կուրս	150000
14	15.02.19	ԵՊՀ հիմնադրամ	Սեփանյան Սիսիան, արևելագիտ. 3-րդ կուրս /Ռ. Բազիկյանի կողմից/	450000
15	28.02.19	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. Կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ դեղագործ և քիմիա 4-րդ կուրս	30000
16	28.02.19	ԵՊՀ հիմնադրամ	Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ, Ճաղարյան Լուսինե, բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000
17	28.02.19	ԵՊՀ հիմնադրամ	Օգն. միակողմ. ծնողազուրկ Ադոնց Հովհաննես, դեղագործ և քիմիա 3-րդ կուրս	30000
18	01.03.19	ԵՊՀ հիմնադրամ	Սարգսյան Սևակ, թյուրքագիտ. 3-րդ կուրս	30000
19	01.03.19	ԵՊՀ հիմնադրամ	Բարսեղյան Վահագն, արաբագիտ. 3-րդ կուրս	30000
20	01.03.19	ԵՊՀ հիմնադրամ	Սարգսյան Էրիկ, արաբագիտ. 2-րդ կուրս	30000
21	01.03.19	ԵՊՀ հիմնադրամ	Մինասյան Մերուժան, թյուրքագիտ. 2-րդ կուրս	30000
22	01.03.19	ԵՊՀ հիմնադրամ	Մխիթարյան Խաչատուր, թյուրքագիտ. 3-րդ կուրս	30000
23	01.03.19	ԵՊՀ հիմնադրամ	Կոստանդյան Վահան, թյուքագիտ. 3-րդ կուրս	30000
24	01.03.19	ԵՊՀ հիմնադրամ	Միերյան Դավիթ, արաբագիտ. 3-րդ կուրս	100000
25	01.03.19	ՀՃԾՊՀ հիմնադրամ	Տեր-Սահակով Արսեն, ճարտ.. և դիզայն 4-րդ կ.	100000
26	01.03.19	Արցախի պետական համալսարան	Գևորգյան Աննա, պատմ և իրավագիտ. 4-րդ կուրս	100000
27	01.03.19	Արցախի պետական համալսարան	Մեսրոպյան Արուսյակ, անգլ.լեզու և գրակ, 2-րդ կուրս	100000
28	11.03.19	Հայաստանի ամերիկյան համալսարան	Սարգսյան Իոաննիս-Սարանդոս Հրանտի, անգլ. լեզվի հաղորդակցություն	150000
29	12.03.19	ՀՀ պետ. տնտեսագիտ. համալսարան	Այվազյան Անժելա Գևորգի, հաշվ. Հաշվառ. և հարկում 2-րդ կուրս	30000
30	29.03.19	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. Կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ դեղագործ և քիմիա 4-րդ կուրս	30000
31	29.03.19	ԵՊՀ հիմնադրամ	Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ, Ճաղարյան Լուսինե, բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000
32	29.03.19	ԵՊՀ հիմնադրամ	Օգն. միակողմ. ծնողազուրկ Ադոնց Հովհաննես, դեղագործ և քիմիա 3-րդ կուրս	30000
33	09.04.19	Արցախի պետական համալսարան	Ղուլյան Գոհար Արտակի, տնտեսագիտ. 3-րդ կուրս	30000
34	29.04.19	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. Կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ դեղագործ և քիմիա 4-րդ կուրս	30000

35	29.04.19	ԵՊՀ հիմնադրամ	Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ, Ճաղարյան Լուսինե, բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000
36	29.04.19	ԵՊՀ հիմնադրամ	Օգն. միակողմ. ծնողազուրկ Ադոնց Հովհաննես, դեղագործ և քիմիա 3-րդ կուրս	30000
37	30.05.19	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. Կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ դեղագործ և քիմիա 4-րդ կուրս	30000
38	30.05.19	ԵՊՀ հիմնադրամ	Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ, Ճաղարյան Լուսինե, բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000
39	30.05.19	ԵՊՀ հիմնադրամ	Օգն. միակողմ. ծնողազուրկ Ադոնց Հովհաննես, դեղագործ և քիմիա 3-րդ կուրս	30000

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 2 775 000

2019թ. ԽԵԱ §ԿՈՎ¦ ԾՐԱԳՐԻ

հովանավորների և ստացողների ցուցակ

Հ/հ	Ազգանուն, անուն	Բնակավայր	Երեխ.	Կով	Ականջի N	Բարերարները
394	Աննա Սմբատյան Արսեն Խաչատրյան	գ.Դրախտաձոր	4	1-ին	5774	Աստղիկ և Ռաֆիկ Զաքյաններ (ԱՄՆ)
395	Քրիստինե Հարությունյան Էդգար Հարությունյան	գ.Դրախտաձոր	4	1-ին	5788	Անի Փիլոսյան, Տիգրան Խաչատրյան (ԱՄՆ)
396	Սահակյան Սվետլանա Հակոբյան Գենադի	գ.Դրախտաձոր	5	1-ին	5762	Գրիգոր Գրիգորյան (ԱՄՆ)
397	Լիլիթ Խաչատրյան (այրի)	գ.Ղազարապատ	7	3-րդ	5787	Վահան Կոշկարյան (ԱՄՆ)
398	Թամարա Ալավերդյան Վանուշ Իսունց	գ. Ալաշկերտ	6	2-րդ	5793	Էմմա և Վարուժ Կյուրեղյաններ (ԱՄՆ)
399	Հովոյան Անուշ (այրի)	գ.Հերիկ	8	3-րդ	5736	Սոնա և Վարդան Ֆունդուկյաններ(ԱՄՆ)
400	Ռիտա Հովսեփյան Արայիկ Խռշոյան	գ.Սոնասար	6	2-րդ	5738	Բազիկյաններ Դավիթ-Ռաֆիկ (ԱՄՆ)
401	Ավետիսյան Ժաննա Ավետիսյան Կարեն	ք. Բերձոր	4	1-ին	5739	Մանե Նազարյան (ԱՄՆ)
402	Լիաննա Պապիկյան (միայնակ)	ք.Կովսական	4	1-ին	5798	Հալեբի Անահիտ և Գաբրիել (ԱՄՆ)
403	Մաթևոսյան Սեդա Բաբայան Սպարտակ	Աղավնատուն համ., գ. Հարար	4	1-ին	5740	Khroyan Nara & Sareen (USA)
404	Կարինե Մուրադյան Արմեն Ամիրխանյան	ք. Կովսական	4	1-ին	5794	Նիկոլ Եղյան (ԱՄՆ)
405	Անահիտ Գրիգորյան Սևակ Մուրադյան	ք. Բերձոր	5	2-րդ	5773	Սիլվա և Վաղարշակ Փիլոսյաններ (ԱՄՆ)
406	Հայկ Վելյան Մարինե Մկրտչյան	Աղավնատուն համ., գ. Հարար	5	1-ին	5770	Վարդգես և Մարինա Թորոսյաններ (ԱՄՆ)
407	Լուսիենե Պետրոսյան Կարեն Վարդանյան	գ.Ալաշկերտ	4	1-ին	5657	Նորիկ և Ռիմա Ավանեսյաններ (ԱՄՆ)
		գ. Ծաղկաբերդ	4	1-ին	5182	Tony Kahve (Great Britain)
409	Քրիստինե Խաչատրյան Դավիթ Խաչատրյան	գ.Սոնասար	5	2-րդ	5718	Levon Kirejian (USA)
410	Նախշուն Հակոբյան Սերոբ Սարգսյան	գ.Փակահան	4	1-ին	5764	Արմեն Արզումանյան (Հայաստան)
411	Սոֆյա Բաղդասարովա Արթուր Հովհաննիսյան	գ.Վանանդ	4	1-ին	5153	Alen Petrosian (USA)
412	Ասյա Ղևոնդյան	գ.Գետամեջ	6	1-ին	5142	Masis Ghevondian (USA)

	(միայնակ)					
413	Անահիտ Խաչատրյան Արթուր Թումանյան	գ.Խաչգետիկ	4	1-ին	5716	Masis Ghevondian(USA)
414	Արմինե Աղաջանյան Հարություն Ափյան	գ.Մխանց	4	1-ին	5734	Hrazdan-Majidie (USA)
415	Լիլիթ Մելքոնյան Վաչագան Մելքոնյան	գ.Գետամեջ	4	1-ին	5156	Gevorg Tutunjyan (USA)
416	Աննա Աղաբեկյան Վարդան Այվազյան	գ.Գետամեջ	5	1-ին	5119	Francesca, Lusine, Zareh(Germany)
417	Հերմինե Հովհաննիսյան Հարություն Թադևոսյան	գ.Գանձա	7	3-րդ	5708	Levon Marashlian (USA)
418	Վարդիթեր Ասատրյան Բարիս Գյուրջյան	գ.Ձորափ	4	1-ին	5701	Շմավոն Շմավոնյան (Հայաստան)
419	Մելինե Ալեքսանյան Հակոբ Ասատրյան	գ.Երիցվանք	4	1-ին	5706	Irene Ovanessian (USA)
420	Լուսինե Բուլղադարյան Արկադիա Եսայան	գ.Երիցվանք	5	1-ին	5724	Shahbazian Karnik (USA)
421	Ալիկ Բադալյան Իրինա Բադալյան	Այգեկ	5	1-ին	5139	Կարլ և Նազիկ Գրիգորյաններ(ԱՄՆ)
422	Վարդուհի Վարդանյան Հովիկ Հակոբյան	գ.Աղաձոր	6	2-րդ	109	Սերոժ Ղարախանյան (ԱՄՆ)
423	Նարինե Գրիգորյան Մանվել Գրիգորյան	գ.Քաշունիք	**6**	2-րդ	5800	Բաբկեն Վարդանյան (ԱՄՆ)
424	Անուշ Ուշակովա (միայնակ)	գ.Ձորափ	7	1-ին	5150	Էմմա և Վարուժ Կյուրեղյաններ (ԱՄՆ)
425	Շողիկ Քոչարյան Սամվել Վարդանյան	ք. Բերձոր	4	1-ին	5769	Mnatsakanyan, Bazikyan, Garnik, Adrine (USA)
426	Էմիլյա Հակոբյան Վարդան Աղաբեկյան	գ.Վակունիս	4	1-ին	5136	Khatchadourian Aida and Tchobanian Aram (USA)
427	Հայկանուշ Հովհաննիսյան Արսեն Ղազարով	գ.Աղավնատուն	7	2-րդ	5707	Juan Carlos Reyes (USA)
428	Բարոյան Սաթենիկ (միայնակ)	գ. Մուշ	5	2-րդ	5723	Tumanyan Nerses and Nune (USA)
429	Արմինե Աբրահամյան Ռոմիկ Մաթևոսյան	գ.Իշխանաձոր	8	2-րդ	5192	Hrazdan Majidiyeh (USA)
430	Հերմինե Դարագուլյան Վահան Դարագուլյան	գ. Հերիկ	7	2-րդ	5117	Zakian Astkhik Star (USA)
431	Գոհար Օհանջանյան Գրիգոր Օհանջանյան	ք. Բերձոր	5	1-ին		Anna Annik Mulroy and Zareh Martin (USA)

Շարունակելի

Մեր հիմնադրամի գործող ծրագրերը լայն արձագանք են գտնում հայրենի և սփյուռքահայ բարերարների շրջանում: Ստորև ներկայացնում ենք հոգաբարձության ստացած երկու նամակ՝ առանց մեկնաբանության:





ՑԱՎԱԼԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհուրդը վերջերս իրոք ցավալի կորուստ ունեցավ: Լսեցինք ազնիվ բարերար Նիկ Քանյանի անակնկալ մահվան գույժը: Հոգաբարձության անդամները թեև չկարողացան մասնակցել հուղարկավորությանը, սակայն օրեր անց այցելեցին նրա թարմ շիրմին և իրենց հարգանքի տուրքը մատուցեցին մեծ բարերարին: Արարողությանը մասնակցում էր հանգուցյալի այրին՝ տիկին Մարի Քանյանը:

The Foundation lost a very good friend and a great contributor, Nick Kanian. He was a very generous and modest man who never liked to be pointed out and remained low key but always tried to reach out to people in need. Nick filled our lives with happy moments and sweet feelings that we will carry in our hearts forever. Those we love don'tgo away, they walk beside us every day. Unseen, unheard , but always near, so loved, so missed, so very dear.

The Recurrent Donation of Nick Kanian

Նիկ Քանյանի ու Սերժ Փափայանցի 2006 թ. ընդհատված զրույցը հավիտենապես շարունակվելու է Արցախում՝ Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորի մերձակայքում՝ իրենց հիշատակը հավերժացնող §Սերժ Փափայանց¦ և §Նիկ Քանյան¦ հարևան այգիներում:

Սրտաբաց ու ժպտադեմ էր Նիկ Քանյանը միշտ հիմնադրամին նվիրատվության պահին



Vahagn Setian was the youngest contributor and a good friend to our foundation.

Gurgen Melikyan attended Vahag Setian's 8th annual Memorial Run/Walk which took place on Sunday December 2nd, 2018.

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ **ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ**, µ³Ý. ·Çï. ¹áÏïáñ, åñáý»ëáñ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ՝

ԱՎԱԳՅԱՆ Ա., բ. գ. դ., պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ Գ., բ. գ. թ., պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ Ա., պ. գ. թ., պրոֆեսոր

Նյութերը, շարվածքը, Ó¨³վորումը և որոշ լուսանկարներ՝ ê. Մուրադյանի:

Â»ñÃÁ µ³Å³ÝíáõÙ ¿ ³Ýí×³ñ:îå³ù³Ý³ïÁ՝ 99:
ÊÙµ³·ñáõÃÛ³Ý Ñ³ëó»Ý և հեռախոսները՝
ºñ¨³Ý 0025, ²µáíÛ³Ý 52 ², ԵՊՀ Ñ³ï
µ³Ý³սիñáõÃÛ³Ý ý³ïáõÉï»ïÇ Ù³ëÝ³ß»Ýù, 215 ë»ÝÛ³ï:
Հեռ.՝ 060 710 629, 055 52 29 36,
55 25 37, 52-29-36: